

Ներածություն

Սույն աշխատությունը՝ այժմ երկրորդ հրատարակությամբ, նպատակ ունի Մարդու իրավունքների Եվրոպական դատարան գործեր տանելու համար գործնական ուղեցույց հանդիսանալ: Առաջին հրատարակության օրվանից՝ 2001 թվականից, կոնվենցիայի անդամ պետությունների թիվը հասավ 45-ի ներառյալ վերջերս՝ 2003 թվականի ապրիլին Եվրոպայի Խորհրդին անդամակցած Սերբիան և Մոնտենեգրոն: Այս գիրքը նպատակ ունի Եվրոպայի Խորհրդի անդամ պետություններում դառնալ օգտակար ուղեցույց իրավաբանների, հասարակական կազմակերպությունների (ՀԿ), անհատ դիմողների, ինչպես նաև Միացյալ թագավորության իրավաբանների համար: Ինչպես նշված էր առաջին հրատարակության նախաբանում, Եվրոպական կոնվենցիայի համակարգն իր գոյության առաջին 50 տարիների ընթացքում ունեցել է վիթխարի նշանակություն Եվրոպայի ողջ տարածքում մարդու իրավունքների չափանիշների պաշտպանության և զարգացման համար: Ապահովել է բազմաթիվ դիմողների պաշտպանությունը, բայց որ ավելի կարևոր է, Եվրոպական դատարանի վճիռները անդամ պետություններին ստիպում են կատարել բազմաթիվ նշանակալի փոփոխություններ իրենց ներպետական օրենսդրությունում, ազգային քաղաքականությունում և պրակտիկայում: Կիրառելով այն սկզբունքը, որ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան «ապրող օրգանիզմ» է հանդիսանում, Եվրոպական դատարանը շարունակում է նոր կյանք ներարկել 1940-ականներին նախագծված համակարգի մեջ: Դատարանը շարունակում է ոչ միայն սահմանափակել կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրականացման անդամ պետությունների միջամտությունը, այլ նաև օգտագործելով պոզիտիվ պարտավորությունների գաղափարը, անընդհատ վերանայում է այն պոզիտիվ քայլերը, որոնք պետությունները պարտավոր են կատարել, որպեսզի չխախտեն կոնվենցիայի պահանջներն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տուժողների իրավունքները և անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու վերաբերող իրավունքների մեծ զինանոցը: Ավելին՝ Դատարանը հակված է ընդլայնել պետությունների պոզիտիվ պարտավորություններն այն դեպքերում, երբ առկա են հանրային պաշտոնյաների կողմից ռասայական խտրականության փաստեր: Կարծիք կա, որ Դատարանի վճիռները որոշակիորեն ուշադրության կենտրոնում են պահել Եվրոպայում պատասխանատվության ժողովրդավարական համակարգը, մասնավորապես այնպիսի հարցերի կապակցությամբ, ինչպիսիք են քաղաքական կուսակցությունների լուծարումը, փոքրամասնությունների իրավունքների իրականացման անհամաչափ սահմանափակումները, խորհրդարանի պատգամավորության թեկնածուների նկատմամբ կիրառված անհիմն սահմանափակումները, ինչպես նաև որոշ խմբերին, օրինակ դատապարտյալներին, ընտրելու իրավունքից զրկելը: Դատարանը շարունակում է իրականացնել իր կարևոր փաստահավաք առաքելությունը, բացառիկ դեպքերում վկաներին հարցաքննելու նպատակով դատավորներից կազմված պատվիրակություններ ուղարկելով այն պետություններ, որոնք թերացել են իրականացնել անհրաժեշտ փաստահավաք գործընթաց: Դատարանը ոչ բոլոր դեպքերում է թույլ տալիս պետություններին խուսափել իրենց պարտավորությունների կատարումից, այն դեպքերում, երբ պետությունը գործում է իր տարածքից դուրս կամ փորձում է մեղադրել չափազանց ակտիվ «ինքնավար կազմավորումներին»: Նշաններ կան նաև, որ Դատարանը նպատակ ունի որդեգրելու առավել միջամտող մոտեցում, օրինակ իրավունքների խախտում արձանագրելուց բացի պետություններից պահանջելով վերադարձնելու անօրինական կերպով բռնագրավված գույքը կամ նույնիսկ ազատ արձակելու ապօրինի պահվող կալանավորներին:

Առաջընթաց է գրանցվել նաև Եվրոպան մահապատժից ազատ տարածք դարձնելու գործում 2003 թվականի հուլիսին 13-րդ Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո, որը արգելում է մահապատժը պատերազմական դրության ժամանակ:

Դատարանը և կոնվենցիոն համակարգը, իհարկե, զերծ չեն քննադատություններից: Գործընթացի առավել խնդրահարույց ասպեկտներից մեկը շարունակում է մնալ այն չափազանց երկար ժամանակը, որի ընթացքում Դատարանը գործի վերաբերյալ որոշում է կայացնում: 1998 թվականին թիվ 11 Արձանագրության ընդունմամբ համակարգը չբարելավվեց այնպես, ինչպես սպասվում էր, և 2004 թվականի մայիսին թիվ 14 Արձանագրության ընդունմամբ Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեն ընդունեց լրացուցիչ միջոցներ, որոնք ավելի արմատական փոփոխությունների կհանգեցնեն: Չնայած չի սպասվում, որ թիվ 14 Արձանագրությունը ուժի մեջ կմտնի մինչև 2006 թվականը, այնուամենայնիվ դրա հիմնական դրույթները քննարկվում են սույն հրատարակությունում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1-ում ներկայացված է Կոնվենցիոն համակարգի և հիմնական ինստիտուտների նկարագիրը: Դատարանի ընթացակարգը և գործունեությունը նկարագրված են 2-րդ և 4-րդ գլուխներում՝ նախնական զանգատի ներկայացումից մինչև դատարանի դատավճռի կատարումը: Այս գլուխները ներառում են նաև բացատրություններ Ստրասբուրգի իրավական օգնության և զանգատի ապահովման միջոցների կիրառման համակարգի մասին: Գլուխ 5-ը անդրադառնում է Դատարանում զանգատի ընդունելիության կանոններին, որոնք հանդիսանում են Կոնվենցիոն համակարգի անկյունաքարային տարրերից մեկը: Գլուխ 6-ը քննարկում է Կոնվենցիայի ամենակարևոր, հիմնարար սկզբունքները, իսկ գլուխ 7-ում ներկայացված է Դատարանի վճիռների ընդհանուր նկարագիրը, ներառյալ Եվրոպական Կոնվենցիայի 1-14-րդ հոդվածները, Թիվ 1, 4, 6, 7, 13 Արձանագրությունների հետ միասին: Գլուխ 12-ում ներկայացված են Կոնվենցիայի հիման վրա ձևավորված նախադեպի աղբյուրներ, ներառյալ իրավաբանական հաշվետվություններ, պարբերականներ, վեբ կայքեր և տեքստեր: Գլուխ 8-ը քննարկում է Կոնվենցիայի վերապահումները և պակասեցումները: Գլուխ 9-ը բացատրում է արդարացի փոխհատուցում տրամադրելիս Դատարանի կողմից կիրառվող սկզբունքները (հատուցում և ծախսեր) և ներառում 2001-2004 թվականներին որոշ գործերով տրամադրված փոխհատուցումների աղյուսակ: Կոնվենցիայի Թիվ 12 Արձանագրությունը կստեղծի խտրականությունն արգելող ինքնուրույն վիճարկվող նորմ, որին վերաբերում է 10-րդ գլուխը: Այս գիրքը հրատարակության պատրաստելու ժամանակ Թիվ 12 Արձանագրությունն արդեն ստացել էր պահանջվող 10-րդ վավերացումը և պետք է ուժի մեջ մտներ 2005 թվականի ապրիլի 1-ին: Թիվ 14 Արձանագրությունը, որը Կոնվենցիոն համակարգում մի շարք նշանակալի փոփոխություններ կներդնի, ուրվագծված է գլուխ 1-ում, և դրա հոդվածներին հղում է կատարվում սույն գրքի ամբողջ տեքստում՝ ըստ անհրաժեշտության: Ես նպատակ են ունեցել ներկայացնել Դատարանի նախադեպը և ընթացակարգը 2004 թվականի հոկտեմբերի դրությամբ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ և ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

1.1 Եվրոպայի խորհուրդ. ստեղծումը և հիմնական մարմինները

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան¹ մշակվել է Եվրոպայի խորհրդի կողմից, որը ստեղծվել էր անմիջապես երկրորդ աշխարհամարտից հետո 1949 թվականին ընդունված Եվրոպայի խորհրդի կանոնադրությամբ՝ նպատակ ունենալով ամրապնդել մշակութային, սոցիալական ու քաղաքական կյանքը Եվրոպայում, ինչպես նաև խթանել մարդու իրավունքները, ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը: Եվրոպայի խորհրդի (նստավայրը Ստրասբուրգ) ստեղծումը և սկզբնական շրջանի գործունեությունը որոշակի առումով երկրորդ աշխարհամարտի տարիներին Եվրոպայում տեղի ունեցած մարդու իրավունքների լրջագույն խախտումների հակազդեցությունն էր հանդիսանում: Ստեղծման պահին Եվրոպայի խորհուրդն ուներ 10 անդամ, այս պահին անդամների թիվը հասնում է 46-ի:

Եվրոպայի խորհրդի հիմնական որոշում կայացնող մարմիններն են՝ Նախարարների Կոմիտեն և Խորհրդարանական Վեհաժողովը:

Նախարարների կոմիտեն կազմված է անդամ պետությունների արտաքին գործերի նախարարներից, որոնք հանդիպում են տարին երկու անգամ. ընթացիկ աշխատանքը կատարվում է նախարարների տեղակալների կամ մշտական ներկայացուցիչների կողմից: Նախարարների կոմիտեն հանդիսանում է Եվրոպայի խորհրդի գործադիր մարմինը, որն իր որոշումները կայացնում է պայմանագրերի, հռչակագրերի, բանաձևերի և հանձնարարականների տեսքով: Նախարարների կոմիտեին իր գործունեության ընթացքում աջակցում է Մարդու իրավունքների հանձնախումբը, որը ստանում է զեկույցներ փորձագետների կոմիտեից: Նախարարների կոմիտեի լիազորությունների մեջ է մտնում Եվրոպական պետություններին հրավիրելը անդամակցելու Եվրոպայի խորհրդին, ինչպես նաև անդամության սառեցումը և դադարեցումը: Նախարարների կոմիտեն վերահսկում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հոդված 46-ի (տե՛ս ավելի մանրամասն Վճիռների կատարումը ստորև 4.5-ում). այս լիազորությունը հիմնականում իրականացվում է տարեկան վեց կանոնավոր հանդիպումների միջոցով:

Խորհրդարանական վեհաժողովը կազմված է անդամ պետությունների խորհրդարանների ներկայացուցիչների խմբերից (ներկայումս 630 անդամ): Անդամ պետությունների ներկայացուցիչների թիվը տատանվում է՝ կախված տվյալ պետության բնակչության թվից: Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող պետություններին կարող է շնորհվել հատուկ հրավիրվածի (ներկայումս այդպիսի կարգավիճակ ունի Մոնակոն) կամ դիտորդի կարգավիճակ: Մի շարք մասնագիտացված հանձնաժողովներ նշանակված են Վեհաժողովի կողմից՝ աշխատելու որոշակի խնդիրների վրա: Այդպիսի հանձնաժողովներից է Մարդու իրավունքների և իրավական հարցերի հանձնախումբը, որը ուսումնասիրում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորների թեկնածությունները մինչև դրանց Խորհրդարանական Վեհաժողովի հաստատմանը ներկայացնելը: Խորհրդարանական Վեհաժողովը ընտրում է Եվրոպական դատարանի դատավորներին անդամ պետությունների կողմից ներկայացված երեք թեկնածուներից բաղկացած ցուցակից: Մարդու իրավունքների և իրավական հարցերի հանձնաժողովի լիազորությունների մեջ է մտնում (Նախարարների կոմիտեի հետ համատեղ) Եվրոպական դատարանի վճիռների կատարման վերահսկողությունը:²

Երրորդ մարմինը՝ Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը, ստեղծվել է 1994 թվականին, որպես տեղական ինքնակառավարման հարցերով խորհրդակցական մարմին, բաղկացած է անդամ պետությունների տեղական և տարածքային

¹ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, Հռոմ, 4.11.50թ., Եվրոպական պայմանագրերի պարբերական հրատարակություն թիվ 5 (այսուհետ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա»):

² ԵԽԽՎ Բանաձև 1226 (2000), *Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը*, 28.9.00:

իշխանությունների ներկայացուցիչներից՝ ներկայումս 630: Կոնգրեսը մշակել է, օրինակ, Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան (1985): Եվրոպայի խորհրդի հովանու ներքո ընդունվել են ավելի քան 190 կոնվենցիաներ և համաձայնագրեր: Մարդու իրավունքների ոլորտում ամենամշակակալի իրադարձությունը եղավ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի (1950) ընդունումը, Եվրոպական Սոցիալական խարտիան (1961), Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիան (1987), Եվրոպական կոմիտեն ընդդեմ ռասիզմի և անհանդուրժողականության (1993) և Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան (1994):

Եվրոպայի Սոցիալական խարտիան³ ուժի մեջ է մտել 1965 թվականին և իրականում հանդիսանում է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի կրկնորդը սոցիալական և տնտեսական իրավունքների ոլորտում: Սոցիալական խարտիայի պահանջների կատարման վերահսկողությունը իրականացվում է Սոցիալական իրավունքների Եվրոպական կոմիտեի (ՍԻԵԿ) կողմից, որը կազմված է 13 անկախ և անկողմնակալ փորձագետներից և գործում է կառավարական կոմիտեի հետ համատեղ (կազմված է պետությունների ներկայացուցիչներից) և Նախարարների կոմիտեից: ՍԻԵԿ-ը վերահսկում է պետությունների հաշվետվությունները և ստանում է կոլեկտիվ զանգատներ⁴ *inter alia* արհեստակցական միություններից, գործատուների կազմակերպություններից, Եվրոպայի խորհրդում խորհրդատվական կարգավիճակ ունեցող միջազգային հասարակական կազմակերպություններից (ՀԿ): Խարտիայի մեջ փոփոխություններ են մտցվել 1988, 1991 և 1995 թվականներին, իսկ 1996 թվականին բարեփոխված Սոցիալական խարտիան ներկայացվեց ստորագրման: Այն ուժի մեջ է մտել 1999 թվականին և աստիճանաբար սկսում է փոխարինել նախկին խարտիային:

«Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին Եվրոպական կոնվենցիան»⁵ ուժի մեջ է մտել 1989 թվականին և վավերացվել է Եվրոպայի խորհրդի 45 անդամների կողմից: Այս կոնվենցիայի հիման վրա ստեղծվել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեն (CPT), որը հանդիսանում է պրոֆիլակտիկ, ոչ-դատական համակարգ՝ ուղղված կոնվենցիայի դրույթներին համապատասխանության վերահսկմանը: CPT-ին կազմված է տարբեր մասնագիտացում ունեցող անկախ փորձագետներից (օրինակ՝ իրավաբաններ, բժիշկներ, կալանավայրերի մասնագետներ) և ունի փաստահավաք առաքելություններ իրականացնելու և զեկույցներ հրապարակելու լիազորություններ: Կոմիտեն կատարում է պարբերական և հատուկ այցեր ազատագրկման վայրեր, այդ թվում՝ կալանավայրեր, ոստիկանության բաժանմունքներ, հոգեբուժական հիվանդանոցներ, ժամանակավոր պահման վայրեր: CPT-ին կարող է առանձին հարցաքննել դատապարտյալներին և լիազորված է առանց միջամտության հաղորդակցվելու ցանկացած անձի հետ, ով իր կարծիքով տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության: Կոմիտեի զեկույցները գաղտնի են և կարող են հրապարակվել միայն տվյալ պետության համաձայնությամբ, սակայն երբ չկա համաձայնություն CPT-ին կարող է հրապարակել իր հայտարարությունը: Խոշտանգումների կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրությունը, որն ուժի մեջ է մտել 2002 թվականի մարտի 1-ին, հնարավորություն է տալիս Նախարարների կոմիտեին հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետության միանալ Կոնվենցիային: 2004 թվականի հոկտեմբերի դրությամբ CPT-ին կատարել էր 184 այց և հրապարակել 134 հաշվետվություն:⁶

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ Եվրոպական հանձնաժողովը (ՌԱԵՀ) վերահսկում է պետությունների օրենսդրությունը և քաղաքականությունը կապված ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության հետ:⁷ ՌԱԵՀ-ը, մինչև հատուկ հաշվետվությունների հրապարակումը՝ յուրաքանչյուր պետությունում իրականացնում է

³ Եվրոպայի խորհրդի պայմանագրերի պարբերական հրատարակություն թիվ 35, 18.10.61:

⁴ Տե՛ս Եվրոպական սոցիալական խարտիայի կոլեկտիվ զանգատների վերաբերյալ տվյալների բազան <http://hndoc.esc.coe.int/esc/serach/default.asp>. կայքում

⁵ Եվրոպայի խորհրդի պայմանագրերի պարբերական հրատարակություն թիվ 126, 26.11.87:

⁶ Տե՛ս մասնավորապես *CPT չափորոշիչները*, CPT/Inf/E (2002) 1, Rev. 2003 (www.cpt.coe.int/en/documents/eng-standards.doc).

⁷ Նախարարների կոմիտե, բանաձև Res (2002)8

խորացված ուսումնասիրություն: ՌԱԵԶ-ը հրապարակում է իր հաշվետվությունները պետության կողմից լիազորված պաշտոնիայի հետ գաղտնի քննարկումներից հետո:

Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան⁸ ուժի մեջ է մտել 1998 թվականին: Այն նախատեսում է պարբերական հաշվետվության գործընթաց (Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, այնուհետև ամեն հինգ տարին մեկ) և վերահսկվում է Նախարարների կոմիտեի կողմից, որին օժանդակում է ազգային փոքրամասնությունների պաշտպանության ոլորտի 18 անկախ փորձագետներից կազմված խորհրդատվական հանձնախումբը: Խորհրդատվական հանձնախումբն ուսումնասիրում է պետությունների հաշվետվությունները (որոնցից առաջինը ստացվել է 1999 թվականին) և հրապարակում է կարծիք պետության կողմից ձեռնարկված քայլերի վերաբերյալ: Այն կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություններ և ստանալ տեղեկատվություն այլ աղբյուրներից, ինչպես օրինակ ԶԿ-ներից:

1.1.1 Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար

Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը նշանակվում է Խորհրդարանական վեհաժողովի կողմից հինգ տարի ժամկետով, Նախարարների կոմիտեի երաշխավորության հիման վրա: Գլխավոր քարտուղարը Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի առնչությամբ ունի մի քանի պարտավորություններ, այդ թվում կապված անդամ պետությունների ներպետական օրենսդրության ոլորտում համաձայն հոդված 52-ի կատարվող հետազոտությունները (տես՝ 1.2.6-ում ստորև): Յուրաքանչյուր անդամ պետություն պարտավոր է Կոնվենցիայի վավերացման իր փաստաթղթերը ի պահ հանձնել Գլխավոր քարտուղարին⁹, ինչպես նաև ծանուցել նրան, երբ տվյալ պետությունը չեղյալ է հայտարարում կոնվենցիան:¹⁰ Պետությունները պարտավոր են ծանուցել Գլխավոր քարտուղարին նաև կախյալ տարածքներում¹¹ կոնվենցիայի կիրառման և Կոնվենցիան մասամբ չեղյալ հայտարարելուն ուղղված ցանկացած քայլի, ինչպես նաև այդ քայլի պատճառների մասին:¹²

Գլխավոր քարտուղարի աշխատակազմը կարևոր դեր ունի նաև պետությունների կողմից Եվրոպական կոնվենցիայի կատարման վերահսկման գործում, ամփոփապես Կոնվենցիային միանալուց հետո ընկած ժամանակահատվածում և կազմում է պարբերական հաշվետվություններ, որոնցում ամփոփում է իր ստացած տվյալները յուրաքանչյուր վերահսկվող պետության վերաբերյալ: Սկսած 2001 թվականից այդպիսի հաշվետվություններ են կազմվել Հայաստանի, Ադրբեջանի, Բոսնիա-Յերցեգովինայի, Վրաստանի, Սերբիա և Մոնտենեգրոյի և Ուկրաինայի վերաբերյալ:¹³

1.1.2 Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի, որը ստեղծվել է 1999¹⁴ թվականին, դերը արտադատական է և կանխարգելիչ: Հանձնակատարի պարտականությունները ներառում են մարդու իրավունքների ստանդարտների արդյունավետ կիրառման խթանումը անդամ պետությունների կողմից, պետություններին, մարդու իրավունքների պետական կազմակերպություններին, Նախարարների կոմիտեին և Խորհրդարանական վեհաժողովին խորհրդատվության և աջակցության տրամադրումը: Առաջին հանձնակատարը՝ Ալվարո Գիլ-Ռոբլեսը, Խորհրդարանական վեհաժողովի կողմից ընտրվել է 1999 թվականի սեպտեմբերին վեց տարի ժամկետով, առանց վերընտրվելու իրավունքի: Հանձնակատարը հրապարակում է Եզրակացություններ, Երաշխավորություններ և տարեկան զեկույցներ:

Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի համակարգում նախատեսվող փոփոխությունները, որոնք մտցվում են Եվրոպական կոնվենցիային կից Թիվ 14

⁸ Եվրոպայի խորհրդի պայմանագրերի պարբերական հրատարակություն No. 157, 1.2.95

⁹ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 59

¹⁰ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 58 (տես՝ ստորև 1.2.5-ում)

¹¹ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 56

¹² Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 15 կետ3: Տե՛ս ավելի մանրամասն ստորև 8.1-ում:

¹³ Տե՛ս www.coe.int/t/e/SG/Secretary-General/Information/Documents/Monitoring/.

¹⁴ Նախարարների կոմիտե, բանաձև (99)50 վերաբերող Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարին

Արձանագրությամբ (տե՛ս 1.2.2-ում ստորև), կլիազորեն Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին միջամտել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պալատում կամ Մեծ պալատում քննվող գործին, որպես երրորդ կողմ:¹⁵

1.1.3 Մարդու իրավունքների համագործակցության և իրազեկության բաժին¹⁶

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների համագործակցության և իրազեկության բաժինը ստեղծվել է խթանելու Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի և Եվրոպայի խորհրդի այլ ստանդարտների վերաբերյալ գիտելիքների տարածումը: Այն նաև նպատակ ունի խթանելու Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում Կոնվենցիային համապատասխանող օրենսդրության ընդունումը և դրա պատշաճ կիրառումը: Մարդու իրավունքների համագործակցության և իրազեկության բաժինը հրատարակում է հրապարակումներ և կազմակերպում է սեմինարներ, համաժողովներ, ու ուսումնական ծրագրեր: Այն նաև տարբեր լեզուներով մշակում է բազմազան ուսումնական նյութեր¹⁷ և հրատարակում Եվրոպական դատարանի վճիռների կենտրոնական և արևելյան Եվրոպայի լեզուներով թարգմանություններ:¹⁸

1.2 ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան ընդունվել է 1950 թվականի նոյեմբերի 4-ին և ուժի մեջ է մտել 1953 թվականի սեպտեմբերի 3-ին: Այն գլխավորապես նպատակ ունի պաշտպանել քաղաքական և քաղաքացիական, այլ ոչ թե տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ:¹⁹ Այն հանդիսանում է 1948 թվականի Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի որոշ դրույթների կիրառմանն ուղղված կարևոր քայլ:

Կոնվենցիան ներդրեց անհատական գանգատ ներկայացնելու իրավունքը, այն է անհատների և կազմակերպությունների իրավունքը վիճարկել իրենց Կառավարությունների գործողությունները Ստրասբուրգյան գործընթացի միջոցով, ներկայացնելով իրենց գործը Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողովին (ստեղծվել է 1954 թվականին) և այնուհետև Եվրոպական դատարանին (ստեղծվել է 1954 թվականին): Դատարանի վճիռները պարտադիր են Կոնվենցիայի անդամ պետությունների համար: Կոնվենցիայով պաշտպանված հիմնարար իրավունքները լրացվել են Կոնվենցիային կից Արձանագրություններով՝ Արձանագրություն թիվ 1,²⁰ Արձանագրություն թիվ 4,²¹ Արձանագրություն թիվ 6,²² Արձանագրություն թիվ 7,²³ և Արձանագրություն թիվ 13:²⁴ Կոնվենցիային կից Արձանագրություն

¹⁵ Կոնվենցիայի Թիվ 14 արձանագրության հոդված 13-ը, որը փոփոխում է Կոնվենցիայի հոդված 36-ը: Թիվ 14 Արձանագրության ընդունմանը նախորդող բանակցությունների ժամանակ մարդու իրավունքների հանձնախմբի անդամ պետությունների փորձագետները մերժեցին այն առաջարկը, որ մարդու իրավունքների հանձնակատարին պետք է թույլատրվի ուսումնասիրել Եվրոպական դատարան ներկայացված գործերը, այս մտտեցման պատճառն ակնհայտորեն նման զարգացումների հանձնակատարի ոչ-դատական գործառույթների վրա հնարավոր ազդեցության վերաբերյալ մտահոգությունն էր: (Տե՛ս Մարդու իրավունքների հանձնախմբի զեկույցը, 53-րդ հանդիպում, Ստրասբուրգ, 25-8 հունիս 2002, պարբերություն 10): Տե՛ս նաև Ֆ. Լիչ «Մարդու իրավունքների «թեժ կետերը» և Եվրոպական դատարանը», (2004) 6 փետրվար, *New Law Journal*

¹⁶ Տե՛ս http://www.coe.int/T/E/Human_Rights/Awareness/.

¹⁷ Տե՛ս http://www.coe.int/T/e/human_rights/awareness/5_Training_Materials/.

¹⁸ Տե՛ս <http://www.humanrights.coe.int/aware/GB/pubil/caselawdtb.asp>.

¹⁹ Սակայն դատարանը հիշեցնում է, որ չկա քննադատությանը դիմացող որևէ որոշում, որը կբաժաներ սոցիալական և տնտեսական իրավունքների ոլորտը Կոնվենցիայով պաշտպանված ոլորտից. տե՛ս *Սիդաբրաս և Զիաուտաս ընդդեմ Լիտվայի (Sidabras and Dziautas v Lithuania) գործը*, թիվ 55480/00 և թիվ 59330/00, 27.7.04, կետ 47:

²⁰ Ընդունվել է 20.3.52 թվականին և ուժի մեջ է մտել 18.5.54 թվականին (Եվրոպական պայմանագրերի պարբերական հրատարակություն No. 9)

²¹ Ընդունվել է 16.9.63 թվականին և ուժի մեջ է մտել 2.5.68 թվականին (Եվրոպական պայմանագրերի պարբերական հրատարակություն No. 46)

²² Ընդունվել է 28.4.83 թվականին և ուժի մեջ է մտել 1.3.85 թվականին (Եվրոպական պայմանագրերի պարբերական հրատարակություն No. 114)

²³ Ընդունվել է 22.11.84 թվականին և ուժի մեջ է մտել 1.11.88 թվականին (Եվրոպական պայմանագրերի պարբերական հրատարակություն No. 117)

թիվ 12 կատեգորիա խտրականությունն արգելող առանձին իրավունք (տե՛ս գլուխ 10-ը): Այն ստացել է պահանջվող տասներորդ վավերացումը 2004 թվականի դեկտեմբերին և պետք է ուժի մեջ մտնի 2005 թվականի ապրիլի 1-ին:²⁵

Անհատական գանգատ ներկայացնելու այս իրավունքի թույլատրումը շատ առումներով հեղափոխական էր, հաշվի առնելով կոնվենցիոն համակարգի ստեղծման ժամանակ պետությունների անկախ ինքնիշխանության գաղափարների ամրությունը: Սակայն գործընթացի քաղաքականացումն այլ առումներով արմատական էր. գործընթացը պետք է վերահսկվեր քաղաքական մարմնի, այն է Նախարարների կոմիտեի կողմից. Եվրոպական հանձնաժողովում սկզբնական շրջանում մեծամասնություն էին կազմում նախկին կամ գործող նախարարները, քաղաքացիական ծառայողները կամ խորհրդարանների պատգամավորները, այլ ոչ թե իրավաբանները, և վարույթը Եվրոպական հանձնաժողովում պահվում էր գաղտնի: Այս գործընթացը տարիների ընթացքում զարգանալով դարձավ ավելի շատ իրավական գործընթաց, չնայած նույնիսկ ամենավերջին փոփոխությունների վրա (ներառյալ Արձանագրություն Թիվ 11-ը, տե՛ս ստորև) քաղաքական նկատառումները ունեցել են էական ազդեցություն:²⁶

Կոնվենցիան պարունակում է մարդու իրավունքների չափորոշիչների այն նվազագույն ցանկը, որի շուրջ Եվրոպական պետությունները կարողացել են համաձայնության գալ ավելի քան 50 տարի առաջ: Մարդու իրավունքների հասկացությունը վիթխարի զարգացում է ունեցել վերջին 50 տարիների ընթացքում՝ ինչ որ առումով Կոնվենցիան դարձնելով ոչ բավարար քսանմեկերորդ դարում մարդու իրավունքների պաշտպանության համար: Չնայած կից արձանագրություններին և ընդունված այն գաղափարի առկայությունը, որ Կոնվենցիան «ապրող օրգանիզմ է», Կոնվենցիայում կան իրավունքների բազմաթիվ բացթողումներ և նաև կարծիք կա, որ կոնվենցիայով նախատեսված իրավունքների սահմանփակումները ձևակերպված են չափազանց լայն: Այնուամենայնիվ, Կոնվենցիան նաև չափազանց մեծ ազդեցություն է ունեցել ամբողջ Եվրոպայի տարածքում մարդու իրավունքների ոլորտին վերաբերող օրենսդրության և քաղաքականության զարգացման և ստեղծման վրա: Եվրոպական կոնվենցիան համարվում է աշխարհում մարդու իրավունքների ամենահաջողված համակարգերից մեկը, հատկապես ի շնորհիվ նրա կիրառելիության և անդամների քանակի, այն բնորոշվել է Եվրոպական դատարանի նախկին նախագահ Ռոլվ Ռեիսդալի կողմից, որպես «Եվրոպայի հիմնական օրենք»: Սակայն, Կոնվենցիան նաև դարձել է իր իսկ հաջողության զոհը: Այս պահին Դատարան ներկայացված գանգատների քանակը չի կարելի համեմատել նախկին տարիների հետ: 1960-ական թվականներին դատարանը կայացրել է միայն 10 վճիռ, 1970-ականներին 26 վճիռ, 1980-ականներին 169: 1990-ականների սկզբին այս թիվը աճեց մինչև ավելի քան հիսուն վճիռ տարեկան: Այդ ժամանակվանից ի վեր կա այս թվի այնպիսի կայուն աճ, որ 2003 թվականին դատարանը կայացրել է 703 վճիռ: Մեկ այլ ճանապարհ, որով կարելի է ցույց տալ «աշխատանքի քանակի» նշանակալի աճը՝ դա Հանձնաժողովի և Դատարանի կողմից 44 տարիների ընթացքում՝ մինչև 1998 թվականը կայացրած որոշումների թվի (38,389) համեմատությունն է 1998 թվականից հետո հաջորդ հինգ տարիների ընթացքում կայացված որոշումների թվի հետ (61,633):²⁷

1990-ականներին տեղի ունեցավ կոնվենցիայի համակարգի արագ տարածում երբ մի քանի Արևելյան Եվրոպայի պետություններ՝ Բուլղարիան, Չեխիայի հանրապետությունը և Սլովակիան (1992), Լեհաստանը (1993), Ռումինիան և Սլովենիան (1994), Լիտվան (1995), Ալբանիան, Անդորրան և Էստոնիան (1996), Ուկրաինան, Խորվաթիան, Մոլդովան, Նախկին Հարավսլավիայի հանրապետություն Մակեդոնիան և Լատվիան (1997), Ռուսաստանը (1998)²⁸ և

²⁴ Ընդունվել է 3.5.02 թվականին և ուժի մեջ է մտել 1.7.03 թվականին (Եվրոպական պայմանագրերի պարբերական իրատարակություն No. 187)

²⁵ Եվրոպական պայմանագրերի պարբերական իրատարակություն No. 177: 17.12.04 թվականի դրությամբ տասնմեկ պետության վավերացրել էր այն՝ Ալբանիա, Հայաստան, Բոսնիա և Հերցեգովինա, Խորվաթիա, Կիպրոս, Ֆինլանդիա, Վրաստան, Նիդերլանդներ, Սան Մարինո, Սերբիա և Մոնտենեգրո, Նախկին Հարավսլավիայի հանրապետություն Մակեդոնիա

²⁶ Օրինակ՝ Եվրոպական դատարանի դատավորների նշանակման կարգը քննադատության է արժանանում կապված դրա «ad hoc և հաճախ քաղաքականացված» լինելու համար: Տե՛ս *Դատական անկախություն. Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում նշանակումների կանոնները և պրակտիկան*, Interights, մայիս 2003:

²⁷ Արձանագրություն թիվ 14-ի բացատրական զեկույց, կետ 5.

²⁸ Տե՛ս ավելի մանրամասն՝ Բ. Բովրինգ «Ռուսաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին, չորս տարի անց» [2000] EHRLR 362:

Վրաստանը (1999) անդամակցեցին Եվրոպայի խորհրդին և վավերացրեցին կոնվենցիան: 2002 թվականին կոնվենցիան վավերացվեց Հայաստանի, Ադրբեջանի, Բոսնիա-Հերցեգովինայի, իսկ 2004 թվականին Սերբիա և Մոնտենեգրոյի կողմից: Այս պահին Եվրոպայի խորհուրդը ունի 46 անդամ, որոնցից 45-ը վավերացրել են կոնվենցիան:²⁹

1.2.1 Արձանագրություն թիվ 11

1990-ական թվականներին Եվրոպայի խորհրդի անդամների թվի աճը համակարգը ավելի մեծ լարվածության տակ դրեց, ինչը նշանակում էր գործերի քննման ավելի երկար ձգձգումներ, որը տևում էր ամենաքիչը չորսից հինգ տարի (գումարած այն ժամանակը, որ ծախսվում էր ներպետական պաշտպանության միջոցները սպառելու վրա): Նախկինում գործերը նախ քննվում էին Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողովի կողմից, նախ՝ ընդունելիության փուլում, ապա՝ գործի ըստ էության քննության փուլում: Միայն սրանից հետո էր գործը ներկայացվում Եվրոպական դատարանին կամ Նախարարների կոմիտեին վերջնական որոշում կայացնելու համար: 1980-ական թվականներին բազմաթիվ առաջարկություններ քննարկվեցին³⁰ կապված համակարգի պարզեցման և արագացման հետ, որոնք հանգեցին Արձանագրություն թիվ 11-ի ընդունմանը:

1998 թվականի նոյեմբերի 1-ից Արձանագրություն թիվ 11-ը³¹ մտել է գործողության մեջ, որով վերացվեց հանձնաժողովի ու Դատարանի երկաստիճան համակարգը և ստեղծվեց մեկ մշտապես գործող Դատարան: Արձանագրություն թիվ 11-ը չփոփոխեց Կոնվենցիայի նյութական դրույթները կամ ընդունելիության չափանիշները, բայց բացի հանձնաժողովի համակարգի վերացումից այն ներդրեց նաև մի քանի այլ կարևոր ընթացակարգային փոփոխություններ, ինչպես օրինակ՝ Դատարանի Մեծ Պալատի կողմից գործերի վերաքննության ընթացակարգի ներդրումը և Նախարարների կոմիտեի կիսա-դատական դերի վերացումը (որը շարունակում է վերահսկել Դատարանի վճիռների կատարումը): Կարծիք կա, որ վերաքննության ընթացակարգը քաղաքական կոմպրոմիսի կասկածահարույց արդյունք է (ուղղված բավարարելու այն պետությունների ցանկությունը, որոնք կողմնակից էին երկաստիճան համակարգի պահպանմանը՝ առաջին ատյանի դատարան ստեղծելու միջոցով), սակայն քաղաքական մարմնի՝ Նախարարների կոմիտեի կողմից Դատարան չուղարկված գործերով վճիռ կայացնելու լիազորության վերացումը ողջունելի զարգացում էր:

Այնուամենայնիվ, հետագայում պարզ դարձավ, որ Արձանագրություն թիվ 11-ը բավարար չէր Դատարան ուղարկվող գործերի աճող քանակը կառավարելու համար: Օրինակ՝ չնայած մինչև 2003 թվականը Դատարանը կարողանում էր ամսական 1500 գործով որոշում կայացնել, սակայն այս թիվը դեռևս զգալիորեն պակաս էր ամեն ամիս Դատարանի կողմից ստացվող 2300 նոր գործերի թվի հետ համեմատած:³² Այս պատճառով 2001 թվականից 2004-թվականը ընկած ժամանակահատվածում Եվրոպական դատարանի համակարգի նոր փոփոխություններ առաջարկվեցին և քննարկվեցին, որոնք հանգեցրեցին Նախարարների կոմիտեի կողմից 2004 թվականի մայիսին Կոնվենցիային կից Արձանագրություն թիվ 14-ի ընդունմանը: Արձանագրությունը համակարգում կկատարի մի քանի նշանակալի փոփոխություններ, սակայն այն ուժի մեջ կմտնի ամենաշուտը 2006 թվականին: Արձանագրությունը ավելի մանրամասն բացատրված է ստորև 1.2.2-ում: Ընթացակարգային փոփոխությունները, որ համաձայն Արձանագրություն թիվ 14-ի պետք է իրագործվեն՝ բացատրված են ընդգծված տեքստով այս գրքի համապատասխան բաժիններում:

1.2.2 Արձանագրություն թիվ 14

²⁹ Մոնակոն ստորագրել է Կոնվենցիան 2004 թվականի հոկտեմբերի 5-ին, սակայն սույն գիրքը գրելու պահին դեռևս չէր վավերացրել այն:

³⁰ Տե՛ս *Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի վերահսկողական համակարգի բարեփոխումները* (1993) 15 EHRR 321.

³¹ *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից Թիվ 11 Արձանագրությունը, որով փոփոխվում էր վերահսկողական համակարգը*, Եվրոպայի խորհուրդ, Doc. H (94) 5; (1994) 17 EHRR 501:

³² Արձանագրություն թիվ 14-ի բացատրական զեկույց, կետ 5

Նույնիսկ Արձանագրություն թիվ 11-ով նախատեսված փոփոխությունների իրագործումից հետո Դատարանի ծանրաբեռնվածության անընդհատ աճի վերաբերյալ վկայում են բազմաթիվ փաստաթղթեր, որոնք, գոնե մասամբ, արտացոլում են Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների թվի աճը սկսած 1990-ական թվականներից:³³ 2001 թվականի փետրվարին Նախարարների տեղակալների կոմիտեն ստեղծեց գնահատող խումբ,³⁴ որի առաջ նպատակ դրվեց առաջարկություններ ներկայացնել «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի շարունակական արդյունավետությունը ապահովելուն ուղղված միջոցառումների վերաբերյալ»: Գնահատող խմբի զեկույցը հրապարակվեց 2001 թվականի սեպտեմբերին որում տեղ էին գտել մի շարք առաջարկություններ, որոնց մի մասի իրականացման համար անհրաժեշտ էր փոփոխություններ մտցնել Կոնվենցիայի մեջ, իսկ մի մասի իրականացման համար՝ ոչ:³⁵ 2001 թվականից 2004 թվականը ընկած ժամանակահատվածում Եվրոպայի խորհրդի կառավարական փորձագետների կոմիտեն՝ մարդու իրավունքների հանձնախումբը, քննարկեց մի շարք առաջարկություններ՝ ուղղված 2004 թվականին Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիային կից արձանագրության նախագծի մշակմանը:

Այս գործընթացի արդյունքում 2004 թվականի մայիսին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ընդունեց Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիային կից Արձանագրություն թիվ 14-ը:³⁶ Թիվ 14 Արձանագրության նպատակն է կատարել մի շարք փոփոխություններ, որպեսզի մասնավորապես պարզեցվի և արագացվի անհատական գանգատների քննման ընթացակարգը: Արձանագրությունը, սակայն, ուժի մեջ չի մտնի, մինչև Եվրոպայի խորհրդի անդամ հանդիսացող յուրաքանչյուր պետություն չվավերացնի այն, ինչը սպասվում է, որ կպահանջի ևս երկու տարի:³⁷ Նախարարների կոմիտեն կոչ է արել պետություններին ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ որպեսզի ինչքան հնարավոր է արագ

³³ Տե՛ս օրինակ՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մամուլի հաղորդագրություն՝ 21.6.99, 24.1.00, 28.9.00, 22.1.01, 21.1.02 (www.echr.coe.int/Eng/Press), Պ. Մահոնի, «խորհրդածություններ բարեփոխված Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ապագայի վերաբերյալ», (1999) 20 HRLJ 2, *Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների կատարումը*, Doc. 8808, 12 հուլիս 2000 (երկի Յուրգենս) (<http://stars.coe.fr/doc/doc00/edoc8808.htm>); խորհրդարանական վեհաժողովի բանաձև 1226 (2000), *Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների կատարումը* (<http://stars.coe.fr/ta/ta00/eres1226.htm>); խորհրդարանական վեհաժողովի բանաձև 1477 (2000), *Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վերաբերյալ վերլուծական խմբի զեկույցը Նախարարների կոմիտեին*, 27 սեպտեմբեր 2001, EG (Court) 200 I, Ստրասբուրգ; *Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների կատարումը* (<http://stars.coe.fr/ta/ta00/erec1477.htm>); խորհրդարանական վեհաժողովի բանաձև 1546 (2002), *Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումների կատարումը* (<http://stars.coe.fr/ta/ta00/erec1546.htm>); Զ. Վեդհամ և Տ. Սաիդ «Անհատական գանգատի իրավունքի գինը», Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վերաբերյալ վերլուծական խմբի զեկույցը Նախարարների կոմիտեին» [2002] EHRLR 169, Մարիա-Բենեդիկտ Դենբուր «Գործերի ամբողջական լուծումը, ՄԻԵԴ-ի ծանրաբեռնվածության աճի խնդրի արմատական լուծումը» [2002] EHRLR 46; *Լ Վիլդհայբեր*, «Դատական տարվա բացման կապակցությամբ իրավիրված Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի հանդիսավոր միտ», Ստրասբուրգ, 23 հունվար 2003; «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո 50 տարի անց - Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախագահի ելույթը», Մամուլի հաղորդագրություն, 3 սեպտեմբեր 2003, *Մարդու իրավունքների հանձնախմբի 2003 թվականի ապրիլի 4-ի զեկույցում տեղ գտած Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան բարենորոգելու վերաբերյալ առաջարկների և այլ գործողությունների կապակցությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումը*, 4 ապրիլ 2003 (CDDH(2003)006 final), *Մարդու իրավունքների Եվրոպական դատարան*, CDDHGDR(2003)024, 26 սեպտեմբեր 2003:

³⁴ Որի մեջ մտնում էին Դատարանի նախագահ Լուզիուս Վիլդհայբերը, Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի տեղակալ Յանս-Քրիստիան Կրյուզերը, Եվրոպայի խորհրդում Իռլանդիայի մշտական ներկայացուցիչ Ջաստին Զարման

³⁵ Գնահատող խմբի զեկույցը Նախարարների կոմիտեին Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վերաբերյալ, 27 սեպտեմբեր 2001, [http://www.coe.int/T/E/Legal_Affairs/Lega_co-operation/Steering_Committees/CDCJ/Documents/2001/EGCourt\(2001\)/1E.pdf](http://www.coe.int/T/E/Legal_Affairs/Lega_co-operation/Steering_Committees/CDCJ/Documents/2001/EGCourt(2001)/1E.pdf)

³⁶ *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային կից Արձանագրություն թիվ 14, փոփոխող Կոնվենցիայի վերահսկողական համակարգը*, Եվրոպայի խորհուրդ պայմանագրերի շարք, No. 194, 13 մայիս 2004:

³⁷ Զոդված 19-ը սահմանում է՝ «Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կոնվենցիայի բոլոր Կողմերի՝ Զոդված 18-ի դրույթներին համապատասխան սույն Արձանագրությամբ պարտավորություններ ստանձնելու համաձայնությունն արտահայտելու ամսաթվից հետո ընկած եռամսյա ժամանակատվածի ավարտին հաջորդող ամսվա առաջին օրը»:

ստորագրվի և վավերացվի Արձանագրությունը, որպեսզի հնարավոր դարձվի դրա ուժի մեջ մտնելը ստորագրման դրվելուց հետո երկու տարվա ընթացքում:³⁸

Ամենանշանակալի և ամենավիճահարույց փոփոխությունը համակարգում Կոնվենցիայի հոդված 35-ի ընդունելիության լրացուցիչ չափանիշների ավելացումն էր: Այս նոր չափանիշները ներդնում է եռաստիճան թեսթ, այն է՝ Դատարանը կարող է գործը հայտարարել անընդունելի, եթե այն գտնի, որ՝

- i. դիմողը չի կրել էական վնաս և,
- ii. եթե մարդու իրավունքների հարգումը չի պահանջում գործի քննությունը ըստ էության և,
- iii. պայմանով, որ այս հիմքով չի կարող մերժվել որևէ գործ, որը պատշաճ քննության չի արժանացել ներպետական դատարանների կողմից:³⁹

Ընդունելիության չափանիշների փոփոխությունների առաջարկը բազմաթիվ կողմերից ենթարկվեց քննադատության, ներառյալ Եվրոպական դատարանի դատավորների,⁴⁰ ներպետական դատավորների,⁴¹ կառավարության ներկայացուցիչների,⁴² մարդու իրավունքների պաշտպանությանը զբաղվող կազմակերպությունների կողմից,⁴³ որպես ոչ անհրաժեշտ, ըստ էության սխալ, սխալ հասցեագրված և չափազանց անորոշ: Դատարանը ինքը պետք է պետք է բնորոշում տա «էական վնաս» և «մարդու իրավունքների հարգում» տերմիններին և պարզաբանում տա թե ինչ է նշանակելու գործի պատշաճ քննության արժանանալը ներպետական դատարանի կողմից: Երրորդ դրույթը ավելացվել է վերջին պահին՝ հաշվի առնելով մի շարք Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների շարունակվող դիմադրությունը փոփոխություններին և խորհրդարանական վեհաժողովի կողմից ներկայացված առաջարկությունը:⁴⁴ Համաձայն Արձանագրություն թիվ 14-ի բացատրական զեկույցի երրորդ դրույթի նպատակն է ապահովել, որ «յուրաքանչյուր գործ արժանանա դատական քննության կամ ներպետական, կամ Եվրոպական մակարդակում»:⁴⁵ Ավելին՝ համաձայնություն է ձեռք բերվել, որ Արձանագրություն թիվ 14-ի ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում նոր ընդունելության չափանիշը պետք է կիրառվի միայն պալատի կամ մեծ պալատի կողմից (և ոչ թե երեք դատավորներից կազմված կոմիտեի կամ մեկ դատավորի կողմից):⁴⁶ Նոր ընդունելության չափանիշը չի տարածվելու այն գանգատների վրա, որոնք ընդունելի են համարվել Դատարանի կողմից մինչև Արձանագրություն թիվ 14-ի ուժի մեջ

³⁸ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի կատարման արդյունավետության ապահովումը պետական և Եվրոպական մակարդակներում, Նախարարների կոմիտեի հռչակագիր, 12 մայիս 2004:

³⁹ Կոնվենցիայի հոդված 35 կետ 3-ը փոփոխող թիվ 14 Արձանագրության հոդված 12

⁴⁰ Մարդու իրավունքների հանձնախմբի 2003 թվականի ապրիլի 4-ի զեկույցում տեղ գտած Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիան բարենորոգելու վերաբերյալ առաջարկների և այլ գործուղությունների կապակցությամբ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումը, 4 ապրիլ 2003 (CDDH(2003)006 final), Մարդու իրավունքների Եվրոպական դատարան, CDDHGDR(2003)024, 26 սեպտեմբեր 2003, Ն. Բրատցա «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ապագան, փոթորիկի ամպեր և արծաթափայլ աստառներ», դասախոսություն թոմաս Սորի հիշատակին, հոկտեմբեր 2002: Է. Փալմ և Վ. Թոմասեն՝ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի փոփոխությունների առաջարկներ և միջոցառումներ, որ պետք է իրականացվեն ուղղված ներկա պահին գործող համակարգի շրջանակներում Դատարանի շարունակական արդյունավետությունը ապահովելուն, 2002

⁴¹ Ս. Սեդլի «Պրոֆեսոր Ֆլորենց Բենոիտ-Ռոմերի հոդվածի մեկնաբանություններ», Մարդու իրավունքների պաշտպանության գործընկերներ, սեմինար Ստրասբուրգ սեպտեմբեր 9-10, 2002

⁴² Տե՛ս օրինակ՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի երկարաժամկետ արդյունավետ աշխատանքի ապահովումը-CDDH-ի առաջարկը պարունակող վերջնական զեկույցը, Մարդու իրավունքների հանձնախումբ CM(2003)55, 8 ապրիլ 2003, Ավստրիայի, Բելգիայի, Ֆինլանդիայի, Հունգարիայի և Լատվիա ՄԻԵԴ-ի 35-րդ հոդվածի վերաբերյալ ընդհանուր դիրքորոշումը, 1 ապրիլ 2004:

⁴³ Տե՛ս ԴՀ-ների պատասխանը գնահատող խմբի զեկույցին (http://www.cm.coe.int/T/E/NGO/public/Groupings/Human_rights/Documents/2002/2002062agen.asp) Տե՛ս նաև հետագա հոդվածը ԴՀ-ների պատասխանը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ապագա արդյունավետությունը ապահովելուն ուղղված առաջարկներին, 28 մայիս 2003 (<http://www.fidh.org/communiqu2003/ue1305a.pdf>):

⁴⁴ Խորհրդարանական վեհաժողովի եզրակացություն No. 251 (2004), 28 ապրիլ 2004, պարբ. 12

⁴⁵ Թիվ 14 Արձանագրության բացատրական զեկույց, պարբ. 82

⁴⁶ Թիվ 14 Արձանագրություն, հոդված 20 կետ 2

մտնելը:⁴⁷ Մնում է հուսալ, որ Արձանագրություն թիվ 14-ը կհասնի իր առջև դրած Եվրոպական կոնվենցիայի ընդհանուր գործընթացը արագացնելու և պարզեցնելու նպատակին, սակայն դեռևս առկա է վտանգը, որ կոնվենցիայի այս փոփոխությունը կարող է բարդացնել և երկարացնել Դատարանի դերը ընդունելիության վերաբերյալ որոշում կայացնելիս:⁴⁸

Արձանագրություն թիվ 14-ով նախատեսված Եվրոպական դատարանի համակարգի մյուս էական փոփոխությունները հետևյալն են՝

- որոշ դեպքերում մեկ դատավորը միանձնյա իրավունք կունենա որոշելու գանգատների անընդունելի լինելը, չնայած ոչ այն դեպքերում, երբ այն վերաբերում է «իրենց» պետությանը.⁴⁹
- պարզեցված և արագացված ընթացակարգ կներդրվի, որի համաձայն երեք դատավորից կազմված կոմիտեին իրավունք կվերապահվի որոշում կայացնել գանգատի ընդունելության վերաբերյալ և, ըստ էության, այն դեպքերում, երբ գանգատի հիմքում ընկած հարցը կապված՝ կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառության հետ, արդեն իսկ Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի շրջանակներում է:⁵⁰ Այս ընթացակարգը, համապատասխանաբար, նպատակ ունի արագացնել «կրկնվող խախտումներին վերաբերող» կամ «կլոնային» գործերի քննությունը.
- նոր ընթացակարգը Նախարարների կոմիտեին լիազորություն կվերապահի վարույթ հարուցել Դատարանում այն դեպքերում, երբ պետությունը հրաժարվում է կատարել վճիռը.⁵¹
- Եվրոպական դատարանի դատավորները կնշանակվեն ինը տարի ժամկետով առանց վերընտրվելու իրավունքի.⁵²
- Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը իրավունք կստանա միջամտել գործերին որպես երրորդ կողմ.⁵³
- Եվրոպական միությանը կթույլատրվի միանալ Եվրոպական կոնվենցիային.⁵⁴

Համակարգի փոփոխությունները, որ համաձայն Արձանագրություն թիվ 14-ի պետք է իրագործվեն, քննարկված են ավելի մանրամասն (ընդգծված տեքստով) այս գրքի համապատասխան բաժիններում:

1.2.3 Տարածքային կիրառումը

Անդամ պետությունները կարող են տարածել Կոնվենցիայի կիրառումը և անհատական գանգատների իրավունքը իրենց տարածքներից ցանկացածի վրա, որոնց արտաքին հարաբերությունների համար նրանք պատասխանատու են (հոդված 56): Դա անելու համար Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարը պետք է ծանուցվի կամ կոնվենցիայի վավերացման ժամանակ, կամ դրանից հետո ցանկացած պահի: Այդ տարածքներում Կոնվենցիան կկիրառվի «պատշաճորեն հաշվի առնելով...տեղական պահանջները» (հոդված 56 կետ 3):

1.2.4 Վեճերի կարգավորման այլ միջոցներից հրաժարվելը

⁴⁷ Նույն տեղում

⁴⁸ Հոդված 35-ում փոփոխություններ մտցնելու շուրջ ծավալված քննարկումների վերլուծությունը տե՛ս Ֆ. Լիչ «Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մատչելիությունը-օրենքով հաստատված իրավունքից մինչև վիճակախաղ» (լույս է տեսնելու 2005-ին) HRLJ.

⁴⁹ Կոնվենցիայի հոդված 26-ը և 27-ը փոփոխող թիվ 14 Արձանագրության հոդված 6 և 7

⁵⁰ Կոնվենցիայի հոդված 28-ը փոփոխող թիվ 14 Արձանագրության հոդված 8

⁵¹ Կոնվենցիայի հոդված 46-ը փոփոխող թիվ 14 Արձանագրության ի հոդված 16

⁵² Կոնվենցիայի հոդված 23-ը փոփոխող թիվ 14 Արձանագրության հոդված 2

⁵³ Կոնվենցիայի հոդված 36-ը փոփոխող թիվ 14 Արձանագրության հոդված 13

⁵⁴ Կոնվենցիայի հոդված 59-ը փոփոխող թիվ 14 Արձանագրության հոդված 17

Կոնվենցիան վավերացնելիս անդամ պետությունները համաձայնում են, որ իրենք չեն օգտվի իրենց միջև վեճերի կարգավորման այլ միջոցներից (պայմանագրեր, կոնվենցիաներ կամ հռչակագրեր) Եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ ծագած վեճը լուծելիս (հոդված 55):⁵⁵

1.2.5 Կոնվենցիայի չեղյալ հայտարարումը

Անդամ պետությունը կարող է դուրս գալ Եվրոպայի խորհրդի կազմից և Կոնվենցիայի համակարգից չեղյալ հայտարարելու ընթացակարգի միջոցով (հոդված 58): Դա կարող է արվել միայն Կոնվենցիային մասնակից դառնալու պահից սկսած հինգ տարի անց և Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին ծանուցում ուղարկելու պահից սկսած վեց ամիսը լրանալուց հետո: Կոնվենցիան չեղյալ կհայտարարվի վեց ամսյա ժամկետը լրանալուն պես, սակայն պետությունը պատասխանատվություն կկրի Կոնվենցիայի ցանկացած խախտման համար, որը տեղի է ունեցել մինչև չեղյալ հայտարարելը:

1.2.6 Հետազոտություններ Գլխավոր քարտուղարի կողմից

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը կարող է նախաձեռնել Կոնվենցիայի դրույթների ներպետական իրականացման վերաբերյալ հետազոտություններ համաձայն հոդված 52-ի:⁵⁶ Անդամ պետությունները Գլխավոր քարտուղարի պահանջով պարտավոր են ներկայացնել պարզաբանումներ այն կարգի վերաբերյալ որով ապահովվում է ներպետական իրավունքում Կոնվենցիայի իրականացումը:

Այս լիազորությունը մինչև այժմ օգտագործվել է յոթ անգամ: Առաջին հինգ հետազոտությունները վերաբերվել են Կոնվենցիայի անդամ բոլոր պետություններին: Օրինակ՝ 1998 թվականին Գլխավոր քարտուղարը պահանջեց բոլոր անդամ պետություններից ներկայացնել տեղեկատվություն՝ կապված արդար դատաքննության իրավունքի իրականացման հետ համաձայն հոդված 6-ի կետ 1-ի (որ վերաբերում էր մի քանի կարգապահական և կարգավորող հարցերի հետ) և հոդված 6-ի կետ 3-ի (կապված քրեական և կարգավորող մարմինների իրավասության տակ գտնվող իրավախախտումների հետ): Պետությունների պատասխանները հրապարակվեցին 1993 թվականին:⁵⁷ Այս հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար համեմատական նյութ հանդիսանալ Կոնվենցիայի դրույթների իրականացման վերաբերյալ, սակայն հնչեցին նաև քննադատություններ, որ տրված հարցերի անորոշության պատճառով դրանց պատասխանները հնարավոր չէ համեմատել մեկը մյուսի հետ:⁵⁸ Ավելին, կառավարությունների պատասխանները քննադատաբար չեն հետազոտվում Եվրոպայի խորհրդի կողմից: 1999 թվականի դեկտեմբերին Գլխավոր քարտուղարը օգտվեց հոդված 52-ով իրեն վերապահված իրավունքներից՝ կապված Չեչնիայի⁵⁹ հետ և 2002 թվականին հետազոտություն նախաձեռնվեց կապված Մոլդովայի կողմից Եվրոպական կոնվենցիայի դրույթների կատարման հետ այն բանից հետո երբ մտահոգություն էր առաջացել Մոլդովայում քաղաքական կուսակցությունների նկատմամբ կիրառվող սահմանափակումների վերաբերյալ:⁶⁰

⁵⁵ Հոդված 55-ը սակայն թույլ է տալիս պետություններին անել դա «հատուկ համաձայնագրերի» միջոցով

⁵⁶ Նախկինում հոդված 57

⁵⁷ H/SG (93) 1.

⁵⁸ H/SG (93) 1. էջ 208

⁵⁹ Տե՛ս *Ռուսաստանի Դաշնություն. տեղեկատվություն ներկայացված Գլխավոր քարտուղարի կողմից Չեչնիայի հանրապետությունում ժողովրդավարության իրավիճակի, նարդու իրավունքների և օրենքի գերակայության վերաբերյալ SG/Inf(2001)22/26 հունիս 2001*

⁶⁰ *Գլխավոր քարտուղարի զեկույցը Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի հոդված 52-ով ամրագրված իր լիազորությունների Մոլդովայի վերաբերյալ կիրառելու վերաբերյալ SG/Inf(2002)20, 6 մայիս 2002:*

1.3 ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

1998 թվականին թիվ 11 Արձանագրությամբ փոփոխված Կոնվենցիան ստեղծեց մշտապես գործող նոր Դատարան:⁶¹ Դիմողներն օժտվեցին ուղղակիորեն Դատարան գանգատներ կայացնելու պարտադիր իրավունքով:

Եվրոպական դատարանի հիմնական համակարգային առանձնահատկություններն ուրվագծված են ստորև՝

- Խորհրդարանական վեհաժողովի կողմից Եվրոպայի խորհրդի անդամ յուրաքանչյուր պետությունից⁶² վեց տարի ժամկետով ընտրվում է մեկ դատավոր, ով կարող է վերընտրվել:⁶³

Թիվ 14 Արձանագրությամբ նախատեսված փոփոխություններ՝ Դատավորի պաշտոնը
Համաձայն Կոնվենցիայի Արձանագրություն թիվ 14-ի (տե՛ս վերը 1.2.2-ում) դատավորները կընտրվեն ինը տարի ժամկետով առանց վերընտրվելու իրավունքի (Կոնվենցիայի հոդված 23-ը փոփոխող Թիվ 14 Արձանագրության հոդված 2)

- Դատավորների պաշտոնավարման ժամկետն ավարտվում է, երբ լրանում է նրանց 70 տարին:⁶⁴ Դատավորը կարող է պաշտոնից հեռացվել, եթե դատավորները քվեների երկու երրորդի մեծամասնությամբ որոշում են ընդունում այն մասին, որ նա այլևս չի համապատասխանում ներկայացված պահանջներին:⁶⁵
- Դատարանը բաժանված է չորս բաժինների: Բաժինները կազմվում են այնպես, որ հնարավորինս ապահովվի գեներացիային և աշխարհագրական հավասարակշռությունը և հաշվի առնվեն ներպետական տարբեր իրավական համակարգերը:⁶⁶ Բաժինները կազմվում են երեք տարի ժամկետով:
- Լիազուճար նիստում Դատարանը ընտրում է Նախագահին, Նախագահի տեղակալներին, պալատների նախագահներին, քարտուղարին և քարտուղարի տեղակալին, ինչպես նաև ընդունում է Դատարանի ընթացակարգի կանոնները:⁶⁷ Այն դատարանի դեր չի խաղում:
- Գործերի մեծամասնությունում ընդունելիության վերաբերյալ որոշում է կայացվում երեք դատավորից կազմված պալատների կողմից (որոնք կազմավորվում են յուրաքանչյուր բաժնում տասներկու ամիս ժամանակով և կարող են գանգատը միաձայն հայտարարել անընդունելի), մնացած գործերը լսվում են յոթ դատավորից կազմված պալատների կողմից, որոնք կազմավորվում են յուրաքանչյուր պալատից հերթագայության սկզբունքով: Յուրաքանչյուր պետությունից ընտրված դատավորը մասնակցում է տվյալ պետության դեմ բերված գանգատի Պալատում ընթացող լսումներին (որպես *ex officio* անդամ, եթե նա չի հանդիսանում տվյալ Բաժնի անդամ),⁶⁸ սակայն տվյալ պետության կողմից ընտրված դատավորը պարտադիր չէ, որ ներկա լինի, երբ գանգատը լսվում է կոմիտեում:

⁶¹ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 19

⁶² Յուրաքանչյուր պետություն ներկայացնում է երեք թեկնածուից կազմված ցուցակ, որը ուսումնասիրվում է Մարդու իրավունքների գլխավոր տնօրինության Նախարարների կոմիտեի կողմից: Խորհրդարանական վեհաժողովում թեկնածուները գնահատվում են Իրավական հարցերի և մարդու իրավունքների կոմիտեի Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դատավորների ընտրության ենթակոմիտեի կողմից: Նշանակման ընթացակարգի, ներառյալ պետությունների կողմից գործընթացի քաղաքականացման աստիճանի և Եվրոպայի խորհրդի պատշաճ ընթացակարգ և ուղեցույց ընդունելու վերաբերյալ քննադատական ուսումնասիրությունը տե՛ս *Դատական անկախություն. Մարդու իրավունքի Եվրոպական դատարանի դատավոր նշանակելու կանոնները և ընթացակարգը*, Interrights, մայիս 2003: Տե՛ս նաև Ա. Կունբեր «Դատական անկախություն. Մարդու իրավունքի Եվրոպական դատարանի դատավոր նշանակելու կանոնները և ընթացակարգը» [2002] EHRLR 486

⁶³ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 23 կետ 1

⁶⁴ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 23 կետ 6

⁶⁵ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 24

⁶⁶ Տե՛ս A. Drzemczewski, *Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի ներքին կառուցվածքը՝ Պալատի և Մեծ պալատի կազմը* [2000] EHRLR 233

⁶⁷ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 26

⁶⁸ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 27 կետ 2

Թիվ 14 Արձանագրությանը նախատեսված փոփոխություններ՝ *Միանձնյա դատավորը*
Համաձայն Կոնվենցիայի Թիվ 14 Արձանագրության (տե՛ս վերը 1.2.2-ում) Դատարանը կարող է նիստեր գումարել նաև միանձնյա (Կոնվենցիայի հոդված 26-ը փոփոխող Թիվ 14 Արձանագրության 6-րդ և 7-րդ հոդվածներ): Սակայն, սահմանված է, որ երբ Դատարանը նիստ է գումարում միանձնյա, դատավորը չի կարող քննել զանգատներ, որոնք բերվել են այն պետության դեմ, որից ինքը ընտրվել է: Երբ Դատարանը նիստ է գումարում միանձնյա, նրան օգնում են զեկուցողները, որոնք Դատարանի քարտուղարության աշխատակիցներն են հանդիսանում (Կոնվենցիայի հոդված 25-ը փոփոխող Թիվ 14 Արձանագրության հոդված 4): Սա մեկն է այն առաջարկներից, որ ներկայացվել է նպատակ ունենալով արագացնել ակնհայտ անընդունելի գործերով վճիռ կայացնելու գործընթացը:

Թիվ 14 Արձանագրությանը նախատեսված փոփոխություններ՝ *«Ակնհայտորեն հիմնավոր գործեր»*

Համաձայն Կոնվենցիայի Թիվ 14 Արձանագրության (տե՛ս վերը 1.2.2-ում) կոմիտեին իրավունք կվերապահվի զանգատն ընդունելի հայտարարել և միաժամանակ որոշում կայացնել ըստ էության, եթե գործի հիմքում ընկած խնդիրը, որը վերաբերում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների մեկնաբանությանը կամ կիրառմանը, արդեն իսկ Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի շրջանակներում է (Կոնվենցիայի հոդված 28-ը փոփոխող Թիվ 14 Արձանագրության հոդված 8) Այս առաջարկը նպատակ ունի արագացնել ակնհայտորեն ընդունելի կլոնային գործերով վճիռ կայացնելու գործընթացը. ավելի մանրամասն տե՛ս ստորև՝ 2.5.9-ում:

Թիվ 14 Արձանագրությանը նախատեսված փոփոխություններ՝ *Մարդու իրավունքների հանձնակատարի միջամտությունը*

Համաձայն Կոնվենցիայի Արձանագրություն թիվ 14-ի (տե՛ս վերը՝ 1.2.2-ում) Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը հնարավորություն կստանա Դատարանին գրավոր դիտողություններ ներկայացնել և մասնակցել նիստերին (Կոնվենցիայի հոդված 36-ը փոփոխող Արձանագրություն Թիվ 1[3]-ի հոդված 13):

- Ամենակարևոր գործերի ընդդատությունը կարող է Պալատի կողմից զիջվել 17 դատավորից կազմված Մեծ պալատին, եթե կողմերից ոչ մեկը չի առարկում.⁶⁹
- Մեծ պալատը ձևավորվում է երեք տարի ժամանակով երկու խմբերի հերթագայության սկզբունքով, որոնք փոխարինվում են ինը ամիսը մեկ անգամ: Խմբերը կազմվում են՝ հաշվի առնելով աշխարհագրական հավասարակշռություն ապահովելու և անդամ պետությունների տարբերվող իրավական համակարգերը արտացոլելու անհրաժեշտությունը.
- Պալատի կողմից ըստ էության լավող գործը կարող է ուղարկվել Մեծ պալատին եթե նրանում արժարժվում է Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների մեկնաբանությանը կամ կիրառմանը առնչվող լուրջ հարց, կամ ընդհանուր կարևորության այլ լուրջ հարց:⁷⁰ Վերստին քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը լավում է Մեծ պալատի հինգ դատավորից կազմված հանձնախմբի կողմից: Եթե հանձնախումբը ընդունում է միջնորդությունը Պալատի նախագահը և տվյալ պետությունից ընտրված դատավորը նորից մասնակցում են վերստին քննությանը.⁷¹
- Վճռի կատարման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Նախարարների կոմիտեն.⁷²
- Դատարանի վերջնական վճիռները պարտադիր են տվյալ անդամ պետության համար.⁷³

⁶⁹ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 30

⁷⁰ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 43

⁷¹ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 43 և 27 կետ 3

⁷² Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 46 կետ 2

⁷³ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա, հոդված 46 կետ 1

Թիվ 14 Արձանագրությամբ նախատեսված փոփոխություններ՝ Վճռի կատարումից հրաժարումը

Համաձայն Կոնվենցիայի Թիվ 14 Արձանագրության (տե՛ս վերը 1.2.2-ում) եթե Նախարարների կոմիտեն գտնում է, որ անդամ պետությունը հրաժարվում է կատարել վճիռը, այն իրավասու է Դատարանին հարց հղել թե արդյոք տվյալ պետությունը չի կատարել իր պարտավորությունները հողված 46-ի կետ 1-ի համապատասխան (Կոնվենցիայի հողված 46-ը փոփոխող Թիվ 14 Արձանագրության հողված 16):

Դատարանի ընթացակարգերը ավելի մանրամասն տե՛ս գլուխ 2-ում և 4-ում:

1.3.1 Խորհրդատվական եզրակացություն

Դատարանը, Նախարարների կոմիտեի խնդրանքով, կարող է Կոնվենցիայի մեկնաբանությանը վերաբերող իրավական հարցերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ տալ (հողված 47): Դատարանի եզրակացությունները պետք է լինեն պատճառաբանված, երբ դատավորների մոտ կա անհամաձայնություն նրանք կարող են ներկայացնել հատուկ կարծիք (հողված 49): Այս դրույթ սակայն շատ սահմանափակ կիրառելիություն ունի քանի որ Դատարանի խորհրդատվական եզրակացությունը չպետք է շոշափի Կոնվենցիայով սահմանված իրավունքների կամ ազատությունների բովանդակությանը կամ ընդգրկմանը (հողված 47 կետ 2): Իսկապես, Դատարանի առաջին և մինչև այս պահը միակ որոշումը համապատասխան հողված 47-ի կայացվել է Մեծ պալատի կողմից 2004 թվականի հունիսի 2-ին⁷⁴, որում Մեծ պալատը եզրակացրել է, որ խորհրդատվական եզրակացություն տրամադրելու վերաբերյալ միջնորդությունը չի համապատասխանում խորհրդատվական եզրակացություն տալու իր լիազորությանը: Միջնորդությունը կատարվել էր Նախարարների կոմիտեի կողմից և վերաբերվում էր Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մարդու իրավունքների կոնվենցիային: Դատարանին խնդրել էին վճռել թե արդյոք ԱՊՀ մարդու իրավունքների հանձնաժողովը հողված 35 կետ 2-ի բ/ ենթակետի իմաստով կարող է համարվել «միջազգային քննության այլ ընթացակարգ»: Մեծ պալատը եզրակացրեց, որ դատարանի խորհրդատվական եզրակացություն տալու լիազորությունը սահմանափակված է համաձայն հողված 47 կետ 2-ի, քանի որ հարցն այնպիսին է, որ կարող են վճռվել ապագա լսումների ընթացքում՝ կոնվենցիային համապատասխան:

1.3.2 Անհատական գանգատներ

Հողված 34-ը նախատեսում է «անհատական» գանգատ ներկայացնելու գործընթաց, կամ ավելի կոնկրետ նախատեսում է, որ գանգատներ կարող են բերվել «ցանկացած անձի, հասարակական կազմակերպության կամ անձանց խմբի» կողմից, որոնք պնդում են, որ դարձել են Կոնվենցիայով ճանաչված իրենց իրավունքների խախտման զոհ: Հետևաբար պետական մարմինները՝ համաձայն հողված 34-ի չեն կարող գանգատ բերել (տե՛ս նաև ստորև 5.2.14-ում): Սակայն, պետությունները, որոնք վավերացրել են Կոնվենցիան կարող են գործ ներկայացնել Եվրոպական դատարան վիճարկելով այլ անդամ պետության կողմից Կոնվենցիայի ենթադրաբար խախտումը (քննարկված է ստորև, տե՛ս 1.3.3-ում):

1.3.3 Միջպետական գործեր

Միջպետական գործընթացը ինչպես նախատեսված է Կոնվենցիայի հողված 33-ով (նախկինում հողված 24) նկատելիորեն հազվադեպ է օգտագործվել: Այս գործընթացը հնարավորություն է տալիս Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին հսկել միմյանց, այսինքն հնարավորություն է տալիս ցանկացած անդամ պետության պահանջել, որպեսզի մեկ ուրիշ անդամ պետություն պատասխան տա իր գործողությունների կամ անգործության համար Եվրոպական դատարանի միջազգային իրավական մեխանիզմի միջոցով: Այս մեխանիզմն օգտագործելու հարցում պետությունների ակնհայտ դժկամությունը բնորոշ չէ միայն

⁷⁴ Տե՛ս Եվրոպական դատարանի 2.6.04 թվականի մամլո հաղորդագրությունը:

Եվրոպական համակարգին: Այն բնորոշ է նաև այլ մարդու իրավունքների տարածաշրջանային մեխանիզմներին, ներառյալ Միջ-Ամերիկյան և Աֆրիկյան համակարգերը, և արտացոլում է միջպետական հարաբերությունների ավելի լայն իրողությունները: Չնայած քաղաքացիական հասարակությունը, ի դեմս մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՉԿ-ների, ձեռնարկել է փորձեր համոզելու պետություններին օգտագործել հողված 33-ը (օրինակ՝ վերջին տարիներին ընդգծել քրդերի ծանր վիճակը Թուրքիայում և չեչեններինը Ռուսաստանում),⁷⁵ սակայն պետությունները դեռևս ցանկություն չունեն անել դա:

Այն դեպքերում, երբ պետությունը, այնուամենայնիվ, որոշում է օգտագործել միջպետական գանգատի մեխանիզմը, ապա գործը համարյա միշտ ունենում է ինչ-որ քաղաքական կարևորություն: Միջպետական գործերը կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին խումբն այն գործերն են, երբ դիմող պետությունը ներկայացնում է տուժողին կամ սերտորեն կապված է զոհերի հետ երկու պետությունների մեջ առկա շարունակական քաղաքական վեճի համատեքստում: Այսպես՝ 1974 թվականին Թուրքիայի կողմից հյուսիսային Կիպրոսում անցկացված ռազմական գործողություններից հետո և նրա կողմից այդ տարածքների շարունակվող օկուպացիային և 1983 թվականին «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության», որը չի ճանաչվում միջազգային հանրության կողմից, հռչակման ի պատասխան, Կիպրոսի կառավարությունը Եվրոպական հանձնաժողովին և Դատարանին ներկայացրեց մի շարք գործեր: Այս գործերի արդյունքում Դատարանը գտավ, որ Թուրքիան պատասխանատու է Կոնվենցիայի մի շարք խախտումների համար:⁷⁶ Այս շարքի ամենավերջին գործերից մեկում Կիպրոսի կառավարությունը գանգատ էր ներկայացրել կապված անհետ կորած անձանց և նրանց հարազատների իրավունքներին, տեղահանված անձանց գույքային իրավունքներին, Հյուսիսային Կիպրոսում անկլավում հայտնված հույն կիպրոսցիների իրավունքներին և թուրք կիպրոսցիների ու գնչուների համայնքի իրավունքներին Հյուսիսային Կիպրոսում: Գանգատի արդյունք եղավ այն, որ Դատարանը ճանաչեց Կոնվենցիայի 14 տարբեր խախտումներ:⁷⁷ Այս տեսակի գործերի առանձնահատկությունը, չափազանց լարված քաղաքական վեճի առկայության համատեքստում, կարող է լինել այն, որ պետությունը կարող է հրաժարվել «համագործակցել» Դատարանի հետ, ինչպես օրինակ դա եղավ, երբ Թուրքական կառավարությունը չներկայացրեց Դատարանին հուշագիր (վերջնական գրավոր առարկություններ) և նույնիսկ 2000 թվականի սեպտեմբերին⁷⁸ չներկայացավ Մեծ պալատի նիստին: *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության*⁷⁹ գործը, նույնպես կարելի է դասել առաջին խմբի գործերի շարքին: Վերոհիշյալ գործը վերաբերում էր հարցաքննության «հինգ մեթոդներին», որ օգտագործվում էին Բրիտանիայի անվտանգության ուժերի կողմից կալանավորված անձանց դեմ, ովքեր կասկածվում էին ԻՅԲ-ի (IRA) անդամ լինելու մեջ (տե՛ս ստորև 7.3.2-ում):

Միջպետական գանգատների երկրորդ խմբին է պատկանում օրինակ՝ *Դանիան ընդդեմ Թուրքիայի*⁸⁰ գործը, որում դիմող պետությունը փորձում էր վերականգնել իր քաղաքացիներից մեկի իրավունքները, որոնք խախտվել էին պատասխանող պետության կողմից: Դանիայի կառավարությունը պնդում էր, որ Դանիայի մի քաղաքացի խոշտանգումների էր ենթարկվել Թուրքիայի ոստիկանության կողմից: Գործի վերաբերյալ բարեկամական կարգավորում ձեռք բերվեց այն բանից հետո, երբ թուրքական կառավարությունը *ex gratia* (որպես բարի կամքի դրսևորում) որոշակի գումար վճարեց, հայտնեց իր ափսոսանքը (թեկուզև «եզակի ու ոչ

⁷⁵ Չեչենիայում մարդու իրավունքների կոպիտ խախտումներին վերաբերող առաջին անհատական գանգատները, որոնք ընդունելի ճանաչվել հետևյալներն են՝ *Իսական ընդդեմ Ռուսաստանի (Isayeva v Russia) գործը* թիվ 57950/00, որոշում 19.12.02, *Իսական ընդդեմ Ռուսաստանի (Isayeva v Russia) գործը* թիվ 57947/00, *Զինա Աբդուլաևան ընդդեմ Ռուսաստանի (Zina Abdulayeva Yusupova v Russia) գործը* թիվ 57948/00, *Լիբկան Բազաևն ընդդեմ Ռուսաստանի (Libkan Bazayeva v Russia) գործը*, թիվ 57949/00, որոշում 19.12.02, *Մագոմեդ Ահմեդովիչ Քաշիևն ընդդեմ Ռուսաստանի (Magomed Akhmedovich Khashiyev v Russia) գործը*, թիվ 57942/00, *Ռոզա Արբովնա Ակայևան ընդդեմ Ռուսաստանի (Roza Aribovna Akayeva v Russia) գործը*, թիվ 57945/00, որոշում 19.12.02:

⁷⁶ Տե՛ս օրինակ *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey) գործը* թիվ 6780/74 և թիվ 6950/75, Comm. Rep. 10.7.76 (հողվածներ 2-ի, 3-ի, 5-ի, 8-ի, 13-ի, 14-ի և Թիվ 1 Արձանագրության հողված 1-ի խախտում) *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey) գործը*, թիվ 8007/77, Coomm. Rep. 4.10.83 (հողվածներ 5-ի, 8-ի և Թիվ 1 Արձանագրության հողված 1-ի խախտում):

⁷⁷ *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի (Cyprus v Turkey) գործը*, թիվ 25781/94, 10.5.01 (2002) 35 EHRR 30:

⁷⁸ *Նույն տեղում, պարբ. 12*

⁷⁹ Շարք Ա, թիվ 25, 18.1.78 (1979-80) 2 EHRR 25

⁸⁰ Թիվ 34382/97, 5.4.00

մասսայական բնույթ կրող խոշտանգման դեպքերի» համար) և ստանձնեց մի շարք պարտավորություններ՝ ներառյալ այն, որ թուրքական ոստիկանությունը պետք է մասնակցի Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպվող վերապատրաստմանը, ինչպես նաև ոստիկանության համար Դանիայի կառավարության կողմից ֆինանսավորվող երկկողմ ուսումնական նախագծին, և համաձայնություն տվեց համագործակցել Խոշտանգումների կանխարգելման Կոմիտեի (ԽԿԵԿ) հետ: Բարեկամական կարգավորման մեջ նշվել էին նաև Թուրքիայի քրեական օրենսգրքի փոփոխությունները՝ ուղղված խոշտանգումների և դաժան վերաբերմունքի վերադարձվող մասնակցների ու սահմանափակմանը:

Երրորդ խմբում այն գործերն են, որոնցում արտացոլված է պետությունների համար պոտենցիալ հնարավորությունը կատարել ավելի ընդհանուր «հսկող» դեր, ինչպես օրինակ *Յունական գործը*:⁸¹ Այդ գործում Դանիայի, Նորվեգիայի, Շվեդիայի և Նիդերլանդների կառավարությունները 1967 թվականին երկու զանգատ էին ներկայացրել անդելով, որ Յունաստանի կառավարությունը խախտել է Կոնվենցիայի հոդվածներ 5-ը, 6-ը, 8-ը, 9-ը, 10-ը, 11-ը, 13-ը և 14-ը, 1967 թվականին Յունաստանում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո իրականացված մի շարք վարչական և օրենսդրական միջոցառումների կիրառման հետևանքով, որոնք հիմք էին հանդիսացել մասսայական ձերբակալությունների, խոշտանգումների, արտակարգ զինվորական դատարանների կողմից իրականացված դատավարությունների և լրատվության միջոցների գրաքննության: Սա առիթ հանդիսացավ Յունաստանի կառավարության կողմից 1969 թվականի դեկտեմբերի 12-ին Կոնվենցիայի չեղյալ հայտարարելու համար, որը նախորդեց Նախարարների կոմիտեի կողմից Կոնվենցիայի տասն հոդվածների խախտման արձանագրմանը:⁸²

Ի տարբերություն անհատական զանգատների, միջպետական գործերում պետությունը կարող է վիճարկել օրենքը *in abstracto*: Սա հետևանք է այն բանի, որ հոդված 33-ը (նախկին հոդված 24) թույլ է տալիս անդամ պետությանը վիճարկել այլ անդամ պետության կողմից Կոնվենցիայի «ցանկացած ենթադրյալ խախտում», ներառյալ այն խախտումները, որոնք հետևանք են պարզապես Կոնվենցիային չհամապատասխանող օրենքի «գոյության»:⁸³ Օրինակ՝ *Կիպրոսն ընդդեմ Թուրքիայի*⁸⁴ գործում Դատարանը հոդված 6-ի խախտում արձանագրեց այն հիմքով, որ «Յյունիստանի Կիպրոսի թուրքական հանրապետությունում» գոյություն ուներ օրենք, որը թույլ էր տալիս քաղաքացիական անձանց դատել զինվորական դատարաններում:⁸⁵

⁸¹ *Դանիան, Նորվեգիան, Շվեդիան և Նիդերլանդները ընդդեմ Յունաստանի (Denmark, Norway, Sweden and the Netherlands v Greece)* գործը, թիվ 3321/67, թիվ 3322/67, թիվ 3323/67 և թիվ 3344/67, 5.11.69, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի տարեկան հաշվետվություն, հատոր 12, 1969.

⁸² Նախարարների կոմիտեի բանաձև DH(70)1, 15.4.70

⁸³ *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Ireland v UK)* գործը, Շարք Ա, թիվ 25, 18.1.78 (1979-80) 2 EHR 25, պարբ. 240

⁸⁴ Թիվ 25781/94, 10.5.01 (2002) 35 EHR 731, պարբ. 358

⁸⁵ Այս հարցի վերաբերյալ տես նաև *Ինկալն ընդդեմ Թուրքիայի (Incal v Turkey)* գործը, թիվ. 22678/93, 9.6.98, (2000) 29 EHR 449.